



Հ. ԱԺԱՌՅԱՆ

ՀՈՒՇԵՐ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ

Կոմիտասի հետ, 1897 թվականին սկսյալ, երեք տարի շարունակաբար պաշտոնավարած ենք Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Եվ ապրելով նույն սենյակին մեջ, ես մոտենի ճանչցա անոր նկարագրի գծերը:

Կոմիտաս մարդկային բացառիկ առաքինություններու ծով էր: Չափազանց աշխատասեր էր ան, աննկուն կամքի տեր, անկեղծ, բարեհոգի, մաքրակրոն և մեծ հայրենասեր: Բացի իր երաժշտական համաձայրենի, ան ուներ նաև քովնոսի շնորհներ—բանաստեղծ էր և ճարտար կոմիկ (երգիծող) դերասան մը, որ ֆարսի (գավեշտի) մեջ ալ մեզ հայտնի էր: Ահա թե ինչո՞ւ ան ճեմարանի մեծին ու փոքրին սիրելին էր դարձած:

Կոմիտաս բացառիկ այտորժեղի ձայն մը ուներ, որուն համար Խրիմյան Հայրիկի մասնավոր համակրանքին էր արժանացած:

Հայրիկի կարգադրությամբ, ան կղեկավարեր վանքի դպրաց դասը և պատասխանատու էր նաև պատարագի՝ սուրբ խորանեն երգված սարկավազի բաժնին և Ավետարաններու ընթերցման կանոնավորության:

Անգամ մը ս. Սարգսի տոնին, եկեղեցին ավարտելեն վերջ, Հայրիկը ուզեց Կոմիտասին անձամբ հայտնել իր շնորհակալությունը օրվան եկեղեցական երգեցողության լավ կազմակերպման և Կոմիտասի այնքան քաղցր երգելուն համար: Եվ Հայրիկը շուտով Կոմիտասը կանչել տվավ մտոր: Անշուշտ,

մեծ էր կաթողիկոսի հրամանը: Ճեմարանի ուսուցիչ և ուսանող աչ ու ձախ ընկանք, բայց Կոմիտասը չգտանք:

Այդ օրը, ս. Գեորգի տոնախմբության առթիվ, վանքի և շրջապատի մեջ հավաքվել էին Հայաստանի շրջաններեն տառնչակ հազարավոր ուխտավորներ, որոնք ավանդական սովորության համաձայն մատաղի սեղաններ բացած, կզվարճանային: Դողդուռնայի երաժշտությունը կլեցներ օդը: Ժողովրդական երգն ու պարը մթնոլորտ մը կստեղծեին:

Կոմիտասի անհայտանալու լուրը հասավ Վեհի ականջը:

Ուշ երեկո էր, երբ Կոմիտասը, ճեմարանի կտուրեն իջնելով, մտավ սենյակ և ուրախության բացազանչություններով ցույց տվավ այդ օր իր հավաքած ժողովրդական երգերն ու պարերգերը, որոնք ձայնագրած էր հույկական ձայնանիշերով: Երբ քիչ վերջը Վեհի հարստ Հայրիկի քով գացինք, վրդոված գտանք զինքը: Կոմիտաս ծունկի եկավ և գոր առջև և Աջը առնելով ըսավ. «Եթե Վեհի ցանկանա, մեղքերս շատ շուտ կքավեմ, հիմա իսկ երգելով այսօր իմ հավաքած ժողովրդական երգերեն»: Եվ Խրիմյան Հայրիկի ներողամիտ հայացքին տակ, Կոմիտաս երգեց իր ձայնագրած ժողովրդական երգերեն՝ մեծ հաճույք պատճառելով Վեհի փառին: Այդ անմոռանալի օրեն վերջ, Խրիմյան Հայրիկի հրամանով ամեն տաղավարի հետ պատարագի Կոմիտաս ազատ կշրջեր

ծողովուրդին մեջ, ծառայելով իր նպատակին:

Կոմիտաս մեծ ընթերցասեր մըն էր: Հայերեն լեզուն՝ աշխարհաբար և գրաբար, ուղեկ գիտեր, կհետաքրքրվեր ժամանակի լավագույն հայ ամսաթերթերով և մասնավորապես կկարդար Մովսես Խորենացին, Նարեկացին, Եղիշեն, Աբովյանի «Վերջ Հայաստանի»-ն և զանոնք հայ ժողովուրդի «մատուցներ»-ը կանվաներ: Կպատմեր, որ

զատորեն ընդօրինակելու բացառիկ շնորհք ուներ: Ծեմարանի մեր մտերիմ հավաքույցներուն որքան հաճելի էր մեզ, երբ մեր խնդրանքին վրա, իր ծննդավայրեն տրված պարերը թե՛ կերգեր, թե՛ կպարեր, և մենք ծափերով կոգտրեինք իր մատներուն շրխշրխկոցները իր բազմաձև ճոճումներուն մեջ: Տղամարդոց հայտնի հայկական ժողովուրդական պարերեն առհավետ անմոռանելի կմնա «շորոր» խիզախ ու խրոխտ պայլը,



Սողոմոն սարկավազը (Կոմիտաս վարդապետ) ճեմարանական իր դասընկերների հետ

իր ուսանողական տարիներեն ինք ընտրած էր իր կյանքի ուղին: Ան հաճախ կըսեր. «Միայն երգիչ մը ըլլալ և չոր երաժշտական մասնագիտությունը չի բավարարեր զիս», — և վստահ շեշտով մը կավելցներ, — «Ես պիտի հասնիմ իմ բուն նպատակիս՝ հայկական երաժշտության զանձերը դուրս պիտի բերեմ հայրենի ավերակներեն...»: Հայկական ժողովրդական բանահյուսության մասնավոր ժամեր կտրամադրեր և հարյուրավոր նմուշներ հավաքած էր:

Կոմիտաս բաց պարող մըն ալ էր: Միևնույն ատեն ան ձևեր և բարբառներ հարու-

որ սուրը ձեռքին ծանր ճոճումներով և մարտական ձևերով կպարեր: Նույնպես շինական կիներու պարերգները, որոնք կպարեր իրենց ձայնի հարազատ ելևջներով և մարմնի ու ձեռքի ճրքին արտահայտություններով, հավետ անմոռանալի կմնան:

Կոմիտաս հոգատար էր իր առողջության: Ան կսիրեր վաղ արշալույսին և երեկոյան արևմուտի ժամանակ դաշտային պտույտները և կըսեր. «Ես սակավ ուտելիքով կսպիրիմ, բայց առանց մաքուր օդ ծծելու՝ չեմբեք»: Կոմիտաս բժախնդիի էր մաքրության իր թխորակ դեմքը, սև մազերը մաքրության

մեջ կփայլեին: Մեծ խնամք կտաներ իր հագուստներուն մաքրության: Հաճախ էր միասին դաշտային պտույտներ կվերսդառնայինք, մինչև որ ստոնորակ ջուրերով չլվացվեր՝ չէր հանգստանար:

Կոմիտասի ամենասիրած գյուղերեն մեկն էր Քանաքեռը. թե՛ Արուվանի տնակը, թե՛ գյուղեն դիտված հայրենի անհորիզոն տարածությունները կողորեին իր երգելու տրամադրությունները: Եւ այնքան հափշտ

տնակը: Այդ օրը սովորականն ավելի երկար տևեց մեր ճամփորդությունը: Կոմիտաս հանկարծակյան որոշեց միացյալ ուժերով դաշտային ծաղիկներեն փունջ մը կուտնել և նվիրել ի հիշատակ Արուվանին: Որքան անտոռանալի էր անոր ոգևորությունը, էրբ երեխայի մը պես կթռչկոտեր աչ ու ձախ դաշտային արահետներու երկայնքին, ամեն մեկ անոր ծաղիկի մը տեսքին իր ձգոր ձայնով ինձ ալ իր մոտ կանչելով: Կեսօրին



Գևորգյան ճեմարանի դասախոսական կազմից մի խումբ՝ իրենց ընտանիքներով (1902 թ.)

տակված էի իր քաղցրաձայն երգերեն, որ էրբեք չէի մերժեր միասին Քանաքեռ երթալ, հակառակ անոր, որ էս իրեն պես մղոկներ քայելու համար տոկուն ու ատույզ չէի: Այդպիսի օրեր, ներշնչվելով, անվերջ կերգեր և հայրենի բնության դիմաց բանաստեղծություններ կհորիներ և էրբ իր բանաստեղծական շնորհքը կգովեի, ինքզինքը կհեզներ և իր կոշտ ծիծաղի խոխոտ ձայնը կպրծազանքեր մեր շուրջը:

Անգամ մը, գարնանային արևածագին հետ ճեմարանեն ճանիս ելանք դեպի Քանաքեռ, այցելելու Խաչատուր Արուվանի

հասանք Արուվանի տնակը: Կույությունը համատարած էր այնտեղ: Կոմիտաս մեր միացյալ փունջերը գորգուրանքով տեղավորեց տնակի պատուհանին առջև: Ինչպես միշտ, նորեն շրջեցանք տնակին բոլորսիքք, նրտանք անոր մուտքի սանդուղքներուն վրա և մեր խոհերուն հետ նախաճաշեցինք: Կոմիտասի փափագով բարձրացանք տնակի կտորը: Գարնանային գարթոնքը գայրսրել էր անոր անմահությունը: Թոշուններու երամակներ կնովողեին մեր շուրջը: Կոմիտաս իր ապրումներու ամենաջերմ հուզումով երգեց «Ո՛վ մեծաբանը դու լեզու»-և...

Անոր հգոր ձայնը արձագանքեց ամեն կողմ: Մեր վերադարձին դուռ ու դրացի, նեղիկ փողոցներու տնակներու շենքերուն առջև հավաքված, իրարու կրացատրեին անոր էջմիածնի վանքին ձայնեղ Կոմիտասը ըլլալը:

Աշնանային օր մըն ալ Քանաքեռի բարձունքին նստած կիհանայինք մեր առջև պարզված բնության տեսարաններու վրա: Հանկարծ մոտակա ձորեն աղջկան մը գեղջուկ մեկ երգին ձայնը առինք: Կոմիտաս, ըստ իր սովորության, գրպանեն թույլի կտոր մը և մատիտ մը հանեց և սկսաւ հայկական ձայնանիշերով նոտագրել:

Երեկոյան մեր ճեմարան վերադարձին ընթրիքի ժամն էր, և մեր օրվան երկար ճանկորդութենեն վերջ անդիմադրելիորեն սրված էր մեր ախորժակը: Բայց ի՞նչ զարմանք. Կոմիտաս տեսրակ մը բերելով, սկսավ իր ձայնագրած երգը մաքուրի առնել: Երբ առաջարկեցի իրեն ճաշել և հետո աշխատիլ, ան պատասխանեց. «Մինչև մաքուրի չառնեն երգի ելեջները, փշրա՛ւք մըն ալ կոկորդէս վար չերթար»: Ես այդ օրը հասկցա, որ Կոմիտաս սովորական մահկանացու մը չէր:

Կոմիտաս օր մը ինձի ըսավ. «Հայկական հետոն հատ խազ կա: Ես կկարծեմ, որ հետոն ձայնաշարը քանի մը ձայն կպարունա՛լէ իր մեջ»: Եվ ուրախությամբ վրա բերավ. «Իս գաղտնիքը գտեր եմ...»:

Օր մը Կոմիտասին հարցուցի, թե ինչո՞ւ հայկական ձայնանիշերով կգրեր: Ան պատասխանեց. «Եվրոպական հինգ զծաւոր թողթ հանպատրաստից ես ուրկե՛ գտնեմ. իսկ հայկական ձայնանիշերը որևէ թողթի վրա անմիջապէս կգրեմ...»:

Օր մը Կոմիտաս ինձ պոլսական շարժիներ երգել տվավ և ծոցատետրին մեջ սկսավ գրել:

— Հայր սուրբ, — ըսի անոր, — եվրոպայիները արհամարհանքով կլսեն այս շարգիները և կծաղրեն:

— Ատոնք հիանալի եղանակներ են և ատոնց ծնունդ տվողները հանճարներ են, — պատասխանեց Կոմիտաս:

Կոմիտաս Հակոբ Պարոնյանի երգիծաբանական արվեստը այնքան կսիրեր, որ անոր գործերեն շատերը անգիր գիտեր:

Կոմիտաս և ես կոմիզմի (երգիծանքի) վարպետներ նկատված էինք: Մեր ուսուցչական հանգստի ժամերուն՝ ճեմարանի մեր ընկերներեն կփնտրվեինք: Երբեմն ան և էս

նգևորվելով, Պաղտասար սարբարի դասատանական ժողովը կներկայացնեինք, և վերջիվերջո, քով-քովի, մեր քայլերը համաչափ նետելով, պոռապով դռնեն ներս կմտնեինք...:

Կոմիտաս օր մը օպերետա մը գրեց Հակոբ Պարոնյանի «Քաղաքավարության վրնասներ»-են և աշակերտներուն սորվեց. Ներկայացումը անհաջող անցավ և վաճառքաւորություն թողուց: Այս եղաւ առաջինը և վերջինը:

Կոմիտաս սովորություն ուներ ստանբարձի կարծր թախտի մը վրա քնանալ, մարմինը ուղիղ վիճակի մեջ պահելով:

Երեք տարվան մեջ անգամ մը միայն տեսա Կոմիտասի կատաղի գայրույթը: -- Ենամարանի ցած պատշգամին մեջ Կոմիտասն ու ես մտերմորեն կխոսեինք: Մեզմն քիչ էր անդին ուսանողները հավաքված կերպին իրարմե ետ ու առաջ, ցած ու բարձր ձայներով: Այդ րուպեին, առաջին անգամը ըլլալով, ես դիտեցի անոր կատաղի բարկությունը: Մինչև օրս չեմ մոռնար ջղայնութենն անոր վզի երակներուն մատնաչափ ցցվիլը:

Իմացեր եմ, որ 1906-ին Փարիզի մեջ Կոմիտասի ցուցադրական մեկ համերգեն վեռջ, ֆրանսացի հայտնի կոմպոզիտոր, դաշնակահար Կլո Դեբուսին ծունկի գալով կհամբուրէ Կոմիտասի ձեռքերը, ըսելով. «Համարեղ հայր Կոմիտաս, Ձեր երաժշտական հանճարի առջև կխոնարհիմ...»:

Կոմիտասի ձայնը մեծ դիպագոն ուներ: Բեռլին գտնված միջոցին հայ ժողովուրդական երգերը անձնապէս ցուցադրած եւսմերգեն վերջ, Բեռլինի օպերայի տնօրենը անձամբ կհրավիրէ զինքը իբրև օպերայի գլխավոր երգիչ և կխոստանա բացատիկ վճարում: Կոմիտաս կպատասխանէ անոր «Իմ երգչի կարողությունները մեկ նպատակի միայն պիտի ծառայեն— ժողովուրդիս երգն ու երաժշտությունը ծանոթացնել երաժշտական աշխարհին»:

1899-ին Կոմիտաս Էջմիածնեն արտասահման երթալու ատեն, իրմե խնդրեցի, որ «Բաց նամակ» հավաքածոյիս համար, անցած բոլոր տեղերեն պատկերագարդ բացիկներ ուղարկեր: Կոմիտաս հարգեց իր խոստումը. 7 հատ պատկերագարդ բաց նամակ ուղարկեց: 7-րդ բացիկը մեր սիրաջերմ ընկերական թղթակցության վերջին հիշատակը եղավ: